
**ԱՂՎԱՆԻՑ ՎԱՉԵ Բ ԵՎ ՎԱՉԱԳԱՆ Գ ԲԱՐԵՊԱՇՏ
ԱՐՔԱՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

ՍՎԱԶՅԱՆ Հ. Ս.

IV դարում ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ Աղվանքում փոփոխություններ է կրում նաև քաղաքական կյանքը: Իշխանության է գալիս նոր տնտեսական կացութաձեվին համապատասխան մի արքայատոհմ, որն, ըստ Մովսես Կաղանկատվացու, անվանվում էր Արշակունյաց: Տարածված կարծիքը, թե այն Մասքթաց Արշակունիների մի ճյուղն է Աղվանքում, բացարձակապես սխալ է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աղվանքի թագավորները սերվել են հայ Արշակունիներից, մասնավորապես հայոց թագավոր Տրդատ Գ-ի ազգակից Մանատրուկից, որը Բուզանդի կողմից Մասքթաց թագավոր հորջորջվող Մանեսանն է¹: Այսպիսով, IV դ. 30-ական թվականներից Աղվանքում թագավորում էր հայ Արշակունիներից սերված համանուն հարստությունը: Մովսես Կաղանկատվացին, գրելով, որ նոր հարստությունը սկզբնավորվել է Վաչագան Քաջ Արշակունուց, թվարկում է նաև տոհմի մյուս արքաներին: Նա գրում է. «Թիւ անուանցն յԱռանայ մինչև ցքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զոցայն ստոյգն թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել (ընդգծումը մերն է՝ - Ս. Հ.): Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այտոքիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւազան, Մերհաւան, Մատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայ Աղուանից ...»²:

Ուսումնասիրողները, հիմք ընդունելով Կաղանկատվացու սույն հաղորդումը, իրավացիորեն ընդունել են, որ Արշակունի Վաչագան քաջին հաջորդած ու անվանապես թվարկված բոլոր թագավորներն էլ Աղվանից աշխարհի արքաներ են և ծագումով Արշակունի: Սակայն, ի տարբերություն շատերի, Բ. Ուլուբաբյանն Աղվանից այս թագավորացանկից զատում-առանձնացնում է Վաչէ Բ-ին և Վաչագան Գ Բարեպաշտին և նրանց հայտարարում Առանշահիկներ ու Հայոց Արևելից կողմանց թագավորներ³: Ըստ Բ. Ուլուբաբյանի, Վաչէ Բ-ն «առաջին Առանշահիկն է, որին մատենագիրը (նկատի

¹ Մանրամասերը տե՛ս **Սվազյան Հ. Ս.**, *Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը (Բանբեր Հայաստանի արխիվների, 1977, N 3, էջ 158-170)*, **նույնի՝** *Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից - VIII դ. ներառյալ)*, Ե., 2006, էջ 168-176:

² **Մովսես Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատուացի)*, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983, էջ 41:

³ **Ուլուբաբյան Բ.**, *Աղվանից թագավորական տան հարցի շուրջը [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 1971, էջ 53-66]*, **նույնի՝** *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*, Ե., 1981, էջ 150:

ունի Եղիշեին - Ս. Հ.) թագավոր է կոչում»⁴: Ուսումնասիրողի կարծիքով, նա Առանշահիկ է, որովհետև Եղիշեն նրան անվանում է «Աղվանից արքա», որն իբրև թե պատմիչի հասկացողությամբ նշանակում է Հայոց Արևելից կողմանց թագավոր: Նա Առանշահիկ է, որովհետև, դարձյալ Բ. Ուլուբաբյանի կարծիքով, այն պարագայում, երբ իբր Աղվանքի մարզերից կարծեցյալ Լփինքն ու Բաղասականը կովում էին Վարդանանց դեմ, Վաչե Բ-ն, որպես Աղվանքի արքա, փոխանակ նրանց կողքին լինելու, ապստամբում է պարսից տերության դեմ և օգնության կանչում իր համար օտար մասքութներին, իրադարձություններ, որոնք, ըստ նրա, Վաչե Բ-ին ոչնչով չեն կապում Կուրի ձախափնյակի հետ, այլ ճիշտ հակառակը, «անհնար ու անտրամաբանական» են դարձնում նրա թագավորությունն այնտեղ ու հավաստում կապը աջափնյակի հետ: Մրանց նա ավելացնում է նաև ավանդությունն այն մասին, որ նույն արքան գահից հեռացվելուց հետո ճգնության է մեկնում Ավետարանոց կոչված մելիքանիստ գյուղ և այնտեղ ավարտում կյանքը⁵:

Բ. Ուլուբաբյանի առաջ քաշած այս դրույթները, որոնք նա բերել է ի հաստատումն իր կարծիքի, սակայն, կազմվել են Եղիշեի համապատասխան տեքստի սխալ մեկնաբանության և հիշատակված ազգագավառների՝ Լփինքի, Բաղասականի, Չոր-Չողի (Մասթթագ երկրի), իբր Բուն Աղվանքի մարզեր լինելու, նույնպես սխալ հիմքի վրա: Նախ ասենք, որ Եղիշեն տվյալ դեպքում «Աղվանք» տեղանունը գործածում է իր սկզբնական իմաստով⁶, այն է՝ «Բուն Աղվանք», մյուս կողմից էլ նշված երկրները միմյանցից և Բուն Աղվանքից միանգամայն տարբեր աշխարհներէին: Դա է ցույց տալիս ինչպես սկզբնաղբյուրներում նրանց՝ վերջինիցս առանձին- առանձին հիշատակվելը⁷, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրի սեփական պատմությունը, որ հյուսվում էր դրանք բնակեցնող էթնիկ խմբերի կողմից: Պատմական այս իրողությունները ոչ մի կերպ թույլ չեն տալիս նրանց դիտել որպես Բուն Աղվանքի բաղկացուցիչ մարզեր: Նրանք Հարավային Կովկասի ինքնուրույն ազգագավառներից էին և Հայոց դեմ կովում էին անկախ Աղվանքից ունեցած որևէ թե՛ վարչական և թե՛ քաղաքական ենթակայությունից: Բացի դրանից, Բուն Աղվանքն այդ ժամանակ Մեծ Հայքի հետ կապված էր միաբանության սուրբ ուխտով ու փոխօգնության դաշինքով, որ կնքել էին երկու երկրների պատվիրակները դեռևս Տիգրանում, երբ Հազկերտ Բ-ի հրամանով գտնվում էին այնտեղ՝ արյաց արքայի հավա-

⁴ *Ուլուբաբյան Բ., Դրվագներ..., էջ 150:*

⁵ *Նույն տեղում, էջ 139-140:*

⁶ «Աղվանք» տեղանվան իմաստային փոփոխությունների մասին տե՛ս **Սվազյան Հ. Ս.**, «Աղվանք» տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ (Լրաբեր, 2008, N 2, էջ 258-267):

⁷ **Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Ե., 1983, էջ 25-27, Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 2005, էջ 74, Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 20, 102 և հաջ. Կաղանկատուացի, էջ 95 և հաջ, Աշխարհացոյց Տովսեսի Խորենացոյ յաւերուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 26-27:**

տափոխության պահանջին պատասխան տալու համար⁸: Հետևաբար, ելնելով պատմականորեն առաջացած նշված իրավիճակից՝ Աղվանքն այդ շրջանում պատերազմ չէր վարի իր բախտակցի ու դաշնակցի դեմ: Նմանապես և Լփինքն ու հիշատակված մյուս երկրները: Եթե դրանք Բուն Աղվանքի մարզերից լինեին, ապա նույնպես չէին մասնակցի պատերազմին և, իրենց միասնական երկրի շահերին ներհակ, կովի դուրս չէին գա հայերի դեմ: Ուրեմն, նշված ազգագավառները Աղվանքի հետ տարածքային ամբողջություն չէին կազմում և հանդես էին գալիս որպես առանձին երկրներ՝ ունենալով իրենց շահերը: Այս պատճառով էլ Վաչե Բ-ն այդ պատերազմում չէր կարող լինել իր համար օտար երկրների կողքին, և սխալվում է Բ. Ուլուբաբյանը, երբ նման հորինված հիմքի վրա է կառուցում իր վարկածը: Ինչ վերաբերում է նրան, թե Վաչե Բ-ն Առանշահիկ է, որովհետև այն ժամանակ, երբ իբրև թե իր երկրի տարբեր մարզեր կոչում էին Վարդանանց դեմ, ինքը, որպես Աղվանից արքա, փոխանակ դրանց մասնակցելու, պատերազմում է Պարսկաստանի դեմ, ապա նշենք, որ այդպիսի միտքը երկու տարբեր ժամանակաշրջանների իրադարձությունների մեկտեղման արդյունք է: Վարդանանց պատերազմը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 450-451 թթ., իսկ Վաչե Բ-ն կովի ելավ հայերի ապստամբությունից տարիներ անց՝ 457 թ., Աղվանքում Պարսկաստանի վարած կրոնահալած քաղաքականության դեմ, հանուն սեփական թագավորության ինքնուրույնության ու դավանանքի ազատության: Այնպես որ Աղվանից արքան չէր կարող Լփինքի ու Բաղասականի կողքին լինել ոչ միայն՝ վարչաքաղաքական առումով, այլև ժամանակագրորեն: Հետևաբար, Վաչե Բ-ի՝ Առանշահիկ լինելուն միտված Բ. Ուլուբաբյանի այս փաստարկումը ևս ճիշտ չէ և չի խոսում նրա վարկածի օգտին:

Կուրի աջափնյակի հետ Վաչե Բ-ի կապվածության, ուրեմն և, Առանշահիկ լինելու ենթադրության համար որպես վկայություն, ուսումնասիրողը նշում է այժմյան Չանախյի գյուղի հին, «Ավետարանոց» անվան ծագման մասին հայտնի ավանդությունը, որի համաձայն, սույն արքան, գահից հեռացվելուց հետո, Քրիստոսի Ավետարանը վերցրած, գալիս է այստեղ և կյանքի մնացած մասն անցկացնում հիշյալ գյուղում խստակրոն ճգնությամբ, որն էլ պատճառ է դառնում գյուղի՝ Ավետարանոց կոչվելուն⁹: Ավանդությունը լսել և գրի է առել Ս. Ջալալյանցը իր ճանապարհորդության ժամանակ: Պատմում է ուղեգրողը. «Գյուղ կոչի Աւետարանոց, վասն զի ավանդությամբ ասեն ծերունիք, թե «Վաչական արքա, երբ դարձավ յուրացութենէ յուրմէ յաւուրս Պերոզի Պարսից արքայի, զԱւետարանն Քրիստոսի ընկալեալ ի գիրկս յուր՝ եկն աստանոր առանձնացեալ ի խստակրօն վարս ճգնութեան, ուստի և անուն տեղոյս կոչեցաւ Աւետարանոց, գուցէ և աստ ընկալաւ բարեպաշտ արքայն Վաչական զթուղթ օրհնութեան ի Գիւտ երանելի կաթողիկոսէ Հա-

⁸ **Ղազարայ Փարպեցոյ** *Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետև՝ Փարպեցի)*, Ե., 1982, էջ 122-128:

Լրաբեր 3-3

⁹ **Ուլուբաբյան Բ.**, *Նրվագներ...*, էջ 140:

յոց»¹⁰: Ինչպես տեսնում ենք, ավանդության մեջ թագավորի անունը նույնիսկ Վաչե չէ, այլ Վաչագան: Ինքը՝ Եղիշեն էլ չի տալիս նրա անունը: Պատմիչի կամ նրան աղբյուր ծառայած վարքի հեղինակի համար նա պարզապես «աղվանից արքա» է: «Վաչե» նրան կոչում է Կաղանկատվացին: Այն Վաչե Բ-ի անվան հետ կապվում է միայն վերջինիս վարքագծի որոշ մանրամասնություններով ու դրանց համադրումների արդյունքով: Աղվանից արքայի անվանց նման անորոշությունը մատնանշում է ավանդության ծագման ժողովրդական բնույթը և ենթադրել է տալիս, որ այն տարածում է գտել ավանի «Ավետարանոց» անվան ծագման բացատրության, ինչպես նաև, հիշյալ ավանի (մանավանդ որ մելիքանիստ գյուղ էր) հեղինակության բարձրացման նպատակով: Միաժամանակ, չի կարելի ժխտել այն հանգամանքը, որ ավանդությունն, այնուամենայնիվ, ունի իր պատմական հիմքը: Դա հիշատակված վայրում Աղվանից արքայի հանգրվանելու և այստեղ ճգնավորական կյանքով ապրելու մասին իրողությունն է: Աղբյուրները դա հաստատում են: Բայց սա արտացոլում է նրա կյանքի մի կարճատև ժամանակամիջոցը, ընդամենը մի դրվագ նրա կյանքի վերջին շրջանից, ուստի որպես այդպիսին չի կարող հիմք ծառայել Վաչե Բ-ին իր ողջ կյանքի ընթացքում աջափնյակի հետ կապելու համար: Այնպես որ Բ. Ուլուբաբյանի ներկայացրած կովանները բռնազբոսիկ են և հարցի լուծման ապացույցներ չեն: Վաչե Բ-ն, ինչպես կար հայ Արշակունիներից սերված Արշակունի և Բուն Աղվանքի թագավոր, այդպիսին էլ մնում է:

Բ. Ուլուբաբյանը, ինչպես արդեն ասել ենք վերևում, Առանշահիկ է համարում նաև Վաչագան Գ Բարեպաշտին և դա հաստատելու համար նույնպես դիմում է աղբյուրների օգնությանը, բայց նրանց տեղեկությունների՝ իրեն հարմար մեկնաբանություններով: Ամենից առաջ նա բերում է Աղվանքի թագավորների ծագումը մատնանշող կաղանկատվացիական հաղորդումը, որը ներկայացրեցինք նաև հոդվածի սկզբում¹¹: Քաղելով հատվածը՝ Բ. Ուլուբաբյանը գտնում է, թե այստեղ խոսքը Վաչագան Քաջի մասին է, որպես Արշակունի, իսկ մյուսների ծագումը մնում է անհայտ: Նա գրում է. «...ըստ պատմիչի խոստովանության՝ հայտնի է, որ Քաջ Վաչագանն Արշակունյաց տոհմից է սերված, իսկ թե ցանկի մեջ եղած մյուսները «յորմէ տոհմից» են, ծածկված է պատմության քողով»¹²: Բայց նման եզրակացությունը գրաբարյան տեքստի ոչ ճիշտ ընկալման արդյունք է: Կաղանկատվացու այն տողերը, թե «թիւ անուանցն յԱռանայ մինչն ցբաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զոցայն ստոյգն թէ յորմէ տոհմէ են չունիմ ասել»¹³, վերաբերում են ոչ թե ցանկում տեղ գտած թագավորներին,

¹⁰ **Զալալեանց Ս.**, *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիդիս, 1858, էջ 248:*

¹¹ **Կաղանկատուացի**, էջ 41:

¹² **Ուլուբաբյան Բ.**, *Դրվագներ...*, էջ 132:

¹³ **Կաղանկատուացի**, էջ 41:

ինչպես կարծում է հետազոտողը, այլ Առանից մինչև Քաջ Վաչագանն ընկած ժամանակահատվածում իբրև թե գահակալածներին, որոնք ավանդական Առանին պատմական անձ ընդունող պատմիչի երևակայության մեջ պետք է որ լինեին և հաջորդեին նրան: Այսպես կարծելով էլ նա միամիտ փորձ է արել գտնել այդ երևակայական հաջորդներին, թվարկել և նրանց մասին որևէ տեղեկություն հաղորդել, բայց չգտնելով, որը բնական էր, արել է իր խոստովանությունը, թե ինքը ոչինչ չունի նրանց մասին հայտնելու: Մինչդեռ Առանի ինքնության մասին Խորենացու հաղորդման վերլուծությունից պարզվում է, որ այդպիսիք գոյություն չէին կարող ունենալ, քանի որ ինքը՝ Առանը, պատմական անձ չէր, այլ «Առան» տեղանվան առաջացման բացատրության համար պատմահոր հորինած կերպար¹⁴, և պատմիչը, որքան էլ կամենար, բնականաբար, իր երևակայած անձերի մասին ոչինչ չէր կարող հայտնել: Կադանկատվացու խնդրո առարկա տողերը, որ մենք հատուկ ընդգծված տեսքով ենք ներկայացրել¹⁵, կարծես թե նախաբան լինեն նրա հետագա ասելիքի համար, որն է հենց իրեն հայտնի թագավորների հիշատակումը: Սկսելով Վաչագան Քաջից, որի Արշակունի լինելը նա շեշտել էր դրանից առաջ, Կադանկատվացին ասում է, որ նրանք տասն են և թվարկում է անուն առ անուն¹⁶: Նրա բերած թագավորացանկից երևում է, որ տոհմի հիմնադիրը, ծագումով Արշակունի այս Վաչագան Քաջն է, որին էլ Աղվանքի գահի վրա հաջորդել են, անվանապես հայտնի ևս ինը գահակալներ. «որք,-ինչպես ինքը՝ պատմիչն է ասում,- ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից»¹⁷, այսինքն՝ թագավորեցին երկրում «ըստ կարգի»՝ այն է հերթականությամբ՝ պահպանելով ժառանգական հաջորդականությունը: Առանձնապես մեծ խորաթափանցություն պետք չէ ունենալ կարծելու համար, որ ցանկում զետեղված բոլոր անվանատերերն էլ, որոնք մեկը մյուսի հետևից թագավորել են տոհմի հիմնադիր Արշակունի Վաչագան Քաջից հետո, իրենց ծագմամբ նույնպես կլինեին նույն տոհմից, ինչ որ և վերջինիս հիմնադիրը, այն է՝ միայն ու միայն Արշակունիներ: Ինքնըստինքյան պարզ է, որ բացառություն չէր կարող կազմել և Վաչագան Բարեպաշտը (ինչպես նաև Վաչե Բ-ն), որը եզրափակում է սույն ցուցակը: Ցուցակը կրկնվում է, և ամենուրեք Վաչագան Բարեպաշտը դարձյալ ընդգրկված է նույն թագավորական տասնյակում¹⁸: Եվ ընդհանրապես, Կադանկատվացին Վաչագան Բարեպաշտի մասին որևէ տեղեկություն հաղորդելիս չի զլանում շեշտելու նրա դինաստիական կապը Քաջ Վաչագանի հետ և թվով տասներորդը լինելու հանգամանքը այդ հարստությունում: «Քանզի,-

¹⁴ Մվազյան Հ. Ս., *Խորենացիական ավանդազրույցի Միսակ- Առանյան ճյուղը և նրա պատմական ատաղձը (տե՛ս Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 5-19):*

¹⁵ Տե՛ս, ծանոթ. 2, էջ 1:

¹⁶ Կադանկատուացի, էջ 41:

¹⁷ Նույն տեղում (ընդգծումը՝ Ս. Հ.):

¹⁸ Նույն տեղում, էջ 338:

գրում է նա այդպիսի հաղորդումներից մեկում,- քաջէն Վաչագանայ մինչև ի Վաչէ թագաւորք էին Աղուանից թուով Թ ըստ կարգի, որոց տասներորդ էր Բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Վաչագան՝ Աղուանից արքայ»¹⁹: Նույն միտքն է բխում պատմիչի և այն խոսքերից, որոնցով նա ամփոփում է Աղվանքի թագավորների գործունեությունը. «Բազումք ի սոցանէ աստուածասէր և Բարեպաշտ վարուք կեցեալ՝ առին յիրաքանչիւր ժամանակի զվախճան: Սակայն ոչ ինչ ումէք ի նոցանէն այսպիսի աստուածային և հոգեւոր ծածկեալ գանձ յատնեալ ընձեռեցաւ, որպէս վերջին Վաչագանայ՝ Բարեպաշտ Աղուանից արքայի»²⁰:

Մի մանրամաս ևս, որ կարծում ենք, նույնպես անկարևոր չէ խնդրի լուծման համար: Դա այն է, որ Կաղանկատվացին մեզ հետաքրքրող անձնավորությանը դիտում է երրորդը²¹ կամ վերջինը²² Վաչագանների մեջ՝ Վաչագան Ա-ից (Քաջից) և Վաչագան Բ-ից (Յոչականից) հետո: Իսկ դա նշանակում է, որ, թվահամարով ևս չանջատելով նրան իր անվանակիցներից, պատմիչը, փաստորեն, ընդգծում է նրա ու մյուս Վաչագանների ազգակցական կապն ու պատկանելությունը միևնույն տոհմին: Եվ եթէ սրան ավելացնենք նաև այն, որ Աղվանքում գործում էր ժառանգական հաջորդականության կարգը²³, ապա Վաչագանը այդ շարքում մեկուսի, այլ դինաստիական պատկանելություն չէր կարող ունենալ: Հետևաբար, վկայակոչված քաղվածքներից ակնհայտորեն երևում է, որ Կաղանկատվացին Վաչագան Գ Բարեպաշտին չի գատում մյուսներից և մեկից ավելի անգամ հաստատում, որ նա ծագումով Արշակունի էր և մեկը նրանցից, որոնք «ըստ կարգի» հաջորդեցին համանուն տոհմի հիմնադրին՝ Վաչագան Քաջին:

Այսքանը բավական էր, որ Վաչագանի դինաստիական պատկանելության հարցը մեկընդմիջտ լուծվեր նրա Արշակունի լինելու օգտին: Բայց Բ. Ուլուբաբյանը անտեսում է սրանցից բխող ուղղակի եզրակացությունը և հանդես է գալիս Կաղանկատվացու ներկայացրած թագավորական ցանկի նոր մեկնաբանությամբ: Այստեղ տեղ գտած տասը թագավորների ծագման պարզաբանմանը նվիրված քննության մեջ նա Վաչագան Քաջին, Ուոնայրին ու Եսվաղենին ներկայացնում է որպէս Արշակունիների ու բուն Աղվանքի թագավորներ²⁴, իսկ նրանց հետ միևնույն ցանկում կողք կողքի հիշա-

¹⁹ Նույն տեղում, էջ 40:

²⁰ Նույն տեղում, էջ 42:

²¹ «Ամրաճածկեալ կային երանելեացն վկայից ամենասուրբ նշխարքն մինչև ցրթագաւորութիւնն երրորդ Բարեպաշտ Վաչագանայ՝ Աղուանից արքայի» (Կաղանկատուացի, էջ 40, ընդգծումը՝ Մ. Ն.):

²² «Հոգևոր ծածկեալ գանձ յատնեալ ընձեռեցաւ, որպէս վերջին Վաչագանայ՝ Բարեպաշտ Աղուանից արքայի» (նույն տեղում, էջ 42, ընդգծումը՝ Մ. Ն.):

²³ Սվազյան Ն. Մ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 186:

²⁴ Բ. Ուլուբաբյանը նրանց հետ մի շարքում նշում է և Սանեսանին (տե՛ս Դըրվագներ..., էջ 141, նույնի՝ Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, էջ 64), որը ոչ Աղվանքի թագավորներից էր և ոչ էլ հիշատակվում է հիշյալ արքայացանկում: Նա, որին ուսումնասիրողները սխալմամբ ընկալել են որպէս Մասքթաց թագավոր, ինչպէս նշվել է, նրա ինքնության մասին խոսելիս (տե՛ս վերը, էջ 1), Հայոց թագավոր Տրդատ Գ-ի ազգակից Սանատրուկն էր, որ Հայոց գահը խլելու անհաջող փորձից հետո անցել էր մասքութների մոտ, ստացել Սանեսան անունն ու Մասքթաց թագավորի տիտղոս և, արշավելով Հայաստան, այժմ էլ «գորութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 260), այսինքն՝ դառնալ Մեծ Հայքի թագավոր (տե՛ս Սվազյան Ն. Մ., Աղվանից թագավորության Արշակունիաց ճյուղի սկզբնավորումը, էջ 158-170, նույնի՝ Աղվանից աշխարհի պատմություն, էջ 168-176): Սանեսանին ներկայացնելով Աղվանքի թագավոր՝ Բ. Ուլուբաբյանը, փաստորեն,

տակվող Վաչագան Բարեպաշտին (և Վաչե Բ-ին) դուրս է բերում ընդհանուր ցանկից և հայտարարում Առանշահիկ ու Հայոց Արևելից կողմանց թագավոր²⁵: Բայց այսպես վարվելով՝ նա պարզապես աղբյուրի միևնույն հաղորդման նկատմամբ երկակի մոտեցում է ցուցաբերում, որն, անշուշտ, չի կարող իրականության ճշգրիտ պատկերը ուրվագծել: Այնուամենայնիվ, նա փորձում է հիմնավորել իր տեսակետը և դրա համար օրինակներ է ընտրում սոսկ Կուրի աջափնյակում Վաչագանի իրականացրած ձեռնարկումներից և, մանավանդ, հենվում նրա մասին Կաղանկատվացու «հրաման տայր (Վաչագանը - Ս. Հ.) այնուհետ և Արցախայ ամուր աշխարհին յիւրում ծառայութեան»²⁶ հաղորդման վրա²⁷: Ասենք, որ թե՛ Բ. Ուլուքաբյանի բերած օրինակները և թե՛ Կաղանկատվացու նշած վկայությունը ճիշտ են և թերևս տային նման կարծիք կազմելու հնարավորություն, եթե միակը լինեին, և դրանցով սահմանափակվեին Վաչագանի գործունեության ոլորտի մասին սկզբնաղբյուրի հաղորդումները: Այնինչ Կաղանկատվացու երկը պարունակում է Կուրի ձախափնյակում ևս Վաչագանի ունեցած ազդեցության ու այստեղ էլ նրա ծավալած գործունեությանը վերաբերող հստակ տվյալներ: Դրանց ծանոթ է և ինքը՝ Բ. Ուլուքաբյանը: Սակայն, հանուն իր վարկածի, ոչ արժանվույն գնահատական է տալիս դրանց և, շեշտը դնելով Վաչագանի այսրկության տարածքում իրականացրած աշխատանքների վրա, այդ միակողմանի հիմքի վրա կառուցում է իր տեսակետը: Այսպես, ըստ պատմիչի, Վաչագան Գ-ն դավանանքի ազատություն ստանալուց հետո հրամանով արգելում է դիցապատությունը և խստիվ պատիժներ սահմանում վերջինիս սպասավորների ու հետևորդների նկատմամբ: Նրա այդ հրամանի ուժը տարածվում է ոչ միայն Արցախում, այլև ողջ երկրի տարածքում. «Կարգեր (Վաչագանը - Հ. Ս.),- գրում է Կաղանկատվացին,-տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և երիցունս, և հայեցողս. և ի Կամբեճս և յԱղուանս զնոյն հրաման սաստից կարգեալ հաստատեր»²⁸:

նույնացնում է Աղվանից և Մասքթաց երկրները, որը նույնպես ճիշտ չէ (այս մասին նույնպես տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 67):

²⁵ **Ուլուքաբյան Բ.,** *Դրվագներ...*, էջ 136-147: **Յուզակի Յուչագան (Վաչագան), Մերհուան, Մատոյ և Ասա** *անվամբ թագավորների պատմականությունը դեռ պետք է հաստատվի: Բ. Ուլուքաբյանը ոչ պատմական անձ է համարում և Վաչե Ա-ին (տե՛ս Ուլուքաբյան Բ., Դրվագներ..., էջ 147), որը, սակայն, մեր կարծիքով, ճիշտ չէ (տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 179):*

²⁶ **Կաղանկատուացի,** էջ 47:

²⁷ **Ուլուքաբյան Բ.,** *Դրվագներ...*, էջ 141-142 և հաջ.:

²⁸ *Նույն տեղում, էջ 50 (ընդգծումը՝ Ս. Հ.):*

Վաչագան Բարեպաշտի հետ կապված այս դրվագներում Արցախի ու Աղվանքի առանձին-առանձին հիշատակումը ցույց է տալիս, որ ներկա պահին պատմիչը նկատի ունի բուն Աղվանքը, և, ուրեմն, վերջինս ևս Կամբեճանի հետ մեկտեղ, որ Անդրկուրյան Հայքի ամենաընդարձակ գավառն էր²⁹, գտնվում էր Վաչագան Բարեպաշտի ազդեցության ոլորտում: Բացի այս ուղղակի հաղորդումից, Կաղանկատվացին «Պատմության» մեջ ունի մեր միտքը հաստատող այլ անուղղակի փաստեր ևս: Դրանցից են Ուտիքի Աղվեն գավառում Վաչագանի գումարած սահմանադիր ժողովի մասնակիցների ցուցակը, որում, աջափնյակից հրավիրված աշխարհիկ և հոգևոր տերերի կողքին, նշվում են նաև ձախափնյակից եկածներ³⁰, Կուրի ափամերձ շրջաններում տարածված մատնահատության և դեղատվության չար աղանդների վերացումը հենց Վաչագան Բարեպաշտի կողմից³¹, Աղվանքի թագավոր Եսվաղենի ապօրինի որդու Խոճկորիկի նշանակումը Տրի քաղաքի գործակալ³² և այլն: Մրանք օրինակներ են, որոնք մատնանշում են տարբեր գործառույթներ անդրկուրյան շրջանում Վաչագան Բարեպաշտի գործունեությունից և լիակատար հիմք են տալիս ասելու, որ նա ձախափնյա շրջանում ևս ուներ ոչ պակաս ազդեցություն, ինչ որ և աջափնյակում: Այս հարցի կապակցությամբ ավելորդ չի լինի հիշել բուն Աղվանքում Վաչագան Գ-ի ծավալված գործունեությունից մի դրվագ, որը մինչև այժմ անհայտ է մնացել խնդրո առարկա հարցով զբաղվողներին: Դա մի պատմություն է արքայի և նրա Վարսենիկ անունով դստեր մասին, որ բերում է հնդկահայ հասարակական քաղաքական գործիչ, գրող ու մանկավարժ Մեսրոպ Թադիադյանը (1803-1858 թթ.) իր «Վեպ Վարսենկան» վեպում: Նրանից օգտվել է Շամախու հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը: Այն տեղ է գտել նաև «Հանրագիտական բառարանում»: Հիշյալ պատմության համաձայն, Վաչագան Գ Աղվանից արքան շուրջ 500 թ. իր դուստր Վարսենիկին օժիտ է տվել ավելի ուշ Բաքվի նահանգը կազմող շրջանները՝ Ապշերոնյան թերակղզով, և Շամախին դարձել է արքայադստեր ամառանոցը³³: Պատմությունը հավանաբար հիմնված է ավանդության վրա: Բայց քանի որ ամեն մի ավանդություն պատմական իրադարձությունների արձագանք է, ուստի կարծում ենք, որ նրանում ևս արտացոլված է այն հետավոր ժամանակների իրական մի դեպք: Հետևաբար, ասվածի հիման վրա անհավանական չի լինի մտածել, որ օժիտ

²⁹ Մնացականյան Ա. Շ., *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը*, Ե., 1966, էջ 48-50:

³⁰ Կաղանկատուացի, էջ 89-90: Տե՛ս նաև, Սահմանադրություն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի եղեալ ի ժողովն, որ Յաղու[է]նս եղև (Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ. Բ, Ե., 1971, էջ 91-92):

³¹ Կաղանկատուացի, էջ 51 և հաջ.:

³² Նույն տեղում, էջ 78:

³³ Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Մադիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շամախույ թեմի: Գրեց Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տիխիս, 1890, էջ 196, 293, 297: Տե՛ս նաև Հանրագիտական բառարան, հ. I, կազմեց Համբարձում Առաքելեան, Թիֆլիս, 1915, էջ 199:

տրված շրջանները վարչականորեն գտնվել են Վաչագան Գ-ի ենթակայության տակ, և դա էլ արքային թույլ է տվել դրանց հետ վարվել իր հայեցողությամբ: Ուրեմն, բոլորովին ճիշտ չէ Վաչագանին հատկացնել Կուրի ձախափնյակի վրա ընդամենը վերահսկողի դեր³⁴, որ դարձյալ սկզբնաղբյուրի տեղեկություններին երկակի մոտեցում ցուցաբերելու արդյունք է: Վաչագան Գ Բարեպաշտին վերաբերող՝ Կաղանկատվացու հիմնական հաղորդումներից և ոչ մի հնարքով չես մակաբերի, թե մեզ հետաքրքրող անձնավորությունը Առանշահիկ է և իշխել է լոկ Հայոց Արևելից կողմերում: Միաժամանակ, հետագա թյուրիմացությունները (միտումնավոր թե ակամա) կանխելու համար հարկ ենք համարում ասել, որ Կաղանկատվացին, այնուամենայնիվ, ունի մի հաղորդում, որում հիշատակվում է մեկը, որ Առանշահիկ տոհմից էր և կրում էր Վաչագան անունը: Սակայն տեղնուտեղն էլ ավելացնենք, որ վերջինս ոչ թե Վաչագան Բարեպաշտն է, այլ նրանից շուրջ երկու հարյուր տարի հետո ապրած քաջարի մի ռազմիկ, որը, լինելով արաբ զորավար Մալիմայի վերջապահ գնդի հրամանատարը, վերջինիս փրկում է Խազիրք կատարած 714 թ. արշավանքի ժամանակ գերվելու վտանգից: «Եկն Մալիման,- գրում է պատմիչը,- աւերեաց գԴարբանդ և եմուտ ի Խազիրս: Ուստի ոչ գորեաց էլանել, ապա թողու զբանակ զկազմն ամենայն ընչիւք և զհարճս անգամ, վերջապահս իւր առնէ, և զԵռանշահիկն զՎաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան զքաջ կորովի աջողակ աղեղնաւորն հանդերձ զօրոքն իւրովք յետոյ իւր արարեալ յորմէ զկնի եկեալ Խազիրքն պարտեցան՝ դարձեալք ի փախուստ»³⁵:

Ձախափնյակում Վաչագան Գ-ի ծավալած գործունեությանը վերաբերող տվյալները ճիշտ գնահատելը և նրան այստեղ վերահրսկողի դեր հատկացնելը կամ դրան այլ շարժառիթ վերագրելը փաստորեն նեղացնում են Վաչագան Բարեպաշտի իշխանության իրական սահմանները, ինչ է թե հիմք ստեղծվի նրան Առանշահիկ կոչելու, քանի որ, ըստ Բ. Ուլուբաբյանի, անկախ ժամանակաշրջանից, Առանշահիկներ էին բոլոր նրանք, ովքեր իշխում էին Հայոց Արևելից կողմերում: Մինչդեռ անտարակուսելի է, որ Վաչագան Բարեպաշտի իշխանությունը հավասարապես տարածվում էր ինչպես Կուրի աջափնյակի, այնպես էլ ձախափնյակի կամ, այլ խոսքով, Աղվանից ողջ մարզպանության տարածքի վրա: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նա արյաց արքա Վաղարշ Ա-ի կողմից նշանակվել էր հենց այս հարավկովկասյան քաղաքական ու վարչական միավորի տիրակալ: Ուշագրավ են նաև նրա իշխանության գալու հանգամանքները, որոնք իրենց մանրամասնություններով նույնպես գալիս են հաստատելու այն միտքը, որ Վաչագան Գ-ն իշխանության էր եկել ողջ մարզպանական տարածքի վրա: 481-484 թթ. հայ ժողովրդի հուժկու ապստամբությունից հետո կնքված Նվարսակի պայմանագրով ոչ միայն Մեծ Հայքը, այլև նրա հարևան երկրները,

³⁴ Ուլուբաբյան Բ., *Դրվագներ...*, էջ 142:

³⁵ Կաղանկատուացի, էջ 320:

մասնավորապես պարսկահպատակ Աղվանից մարզպանությունը, վերստացան իրենց ինքնիշխանությունը տեղական ազնվականության ներկայացուցիչների գլխավորությամբ: Հիշյալ պայմանագրով, բացի կրոնական ազատությունից և շնորհագրկված ավատատերերի իրավունքների վերականգնումից, նախատեսվում էր նաև միայն տոհմական ծագում ունեցող իշխանավորների նշանակում երկրի կառավարման համար³⁶: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, 485 թ. Տիգրան է մեկնում Վահան Մամիկոնյանը և այստեղ արքունիքի ու ողջ ավագանու ներկայությամբ արյաց արքա Վաղարշի կողմից նշանակվում Մամիկոնյան տան տանուտեր և Հայոց սպարապետ³⁷, իսկ որոշ ժամանակ անց հատուկ հրովարտակով՝ նաև երկրի մարզպան³⁸: Նույնը տեղի է ունենում նաև Վաչագան Բարեպաշտի հետ: Կաղանկատվացին պատմում է, որ նա էլ է Տիգրան մեկնում և Վաղարշի ձեռքից ստանում Աղվանքի կառավարման դեկր: «Յայնժամ,- գրում է պատմիչը,- նախարարքն աշխարհին Աղուանից առեալ զիրաքանչիր իշխանութիւնս՝ միաբանեալ առնուն զՎաչագան իւրեանց հայրենի թագաւորական զարմէն քաջարութեանց, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի՝ եղբօր Վաչէի՝ արքային Աղուանից. և տարեալ թագաւորեցուցանէին ի ձեռն Վաղարշու՝ արքային Պարսից»³⁹: Հասկանալի է, որ Աղվանքի հետագա քաղաքական կյանքի համար խոշոր նշանակություն ունեցող այս իրադարձությունը ևս տեղի է ունեցել նույն՝ 485 թ., ողջ տարածաշրջանում Պարսկաստանի վարած համընդհանուր քաղաքականության ընթացքում: Վերադառնալով Տիգրանից («եկեալ յաշխարհն Աղուանից»⁴⁰)՝ Վաչագանը արքայաբար իշխում է «Արցախայ ամուր աշխարհին յիրում ծառայութեան», «ի Կամբէ-ճըս և յԱղուանս», այն է՝ ողջ մարզպանական Աղվանքում, քանզի միամտություն կլինէր կարծել, թե Վաղարշը նրան այդ միասնական քաղաքական միավորի մի մասի վրա էր միայն տիրակալ նշանակել: Ամբողջ Աղվանից աշխարհի (մարզպանության) նախարարական դասի երաշխավորությամբ էր Վաչագանը Տիգրան մեկնել և այնտեղից վերադառնալու էր որպես այդ ողջ աշխարհի գլխավոր: Վաչագանի նշանակումը պատահական չէր: Նա տոհմիկ ազնվական էր և «հայրենի թագաւորական զարմէն», որ նման նշանակումների համար Նվարսակի պայմանագրի պահանջներից մեկն էր⁴¹: Պատմիչը նրան շարունակ կոչում է «արքա» կամ «թագավոր»: Շատ հավանական է, որ այս բարձր պաշտոնին նշանակելիս նրան իրավունք է վերապահվել կրելու նաև իր նախնիների

³⁶ Փարպեցի, էջ 391:

³⁷ Նույն տեղում, էջ 424:

³⁸ Նույն տեղում, էջ 432:

³⁹ Կաղանկատվացի, էջ 48:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ *«Եւ երկրորդ խնդիրն այս է, թե զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն ու զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ զլաւսն և պատուականս՝ զքաջքն և զօգտակարն...»* (Փարպեցի, էջ 391):

աստիճանակարգը՝ «թագավոր» տիտղոսով: Վաչագան Բարեպաշտի իշխանության գալով վերականգնվում են նախնյաց ավանդույթներն ու սովորույթները, վերահաստատվում՝ նախարարական կարգը, կանոնակարգվում՝ հասարակական հարաբերությունները: Վաչագան Բարեպաշտը իշխեց շուրջ քառորդ դար՝ 485-510 թթ.: Նրա իշխանության շրջանում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք իրենց ուղղումներն են մտցնում նրա ենթակայության տակ գտնվող մարզպանական Աղվանքի կյանքում, այն ենթարկում աշխարհագրական վերաձևումների ու նոր վարչաքաղաքական միավորների կազմավորման պատճառ ու հիմք դառնում:

Արևելյան Անդրկովկասում ամուր հաստատվելու՝ պարսից արքաների վարած քաղաքականության հետևանքով, այստեղ շուտով սկսվում է մասնատման գործընթաց, որի ժամանակ մարզպանությունը ձևավորած մարզերը աստիճանաբար առանձնանում են միմյանցից և վերածվում սեփական իշխաններով կառավարվող ինքնուրույն միավորների: Այս ճանապարհով մարզպանության՝ Կուրից հյուսիս ընկած շրջաններում ձևավորվում են կազմավորումներ, որոնք հիմք են դառնում հետագայի՝ Շիրվանի, Շաքիի և Դերբենդի իշխանությունների բարձրացման համար՝ համանուն կենտրոններով, իսկ հարավային շրջաններում իր գոյության առանձնությունն է ամրապնդում Ուտիք-Արցախյան հայաշխարհը՝ վաղեմի Պարտավ մայրաքաղաքով⁴²: Վարչաքաղաքական այս մասնատումներն ու Կուրի ձախափնյակում առաջացած նոր վարչական միավորները՝ սեփական իշխանների գլխավորությամբ, այլևս տեղ չեն թողնում Վաչագան Բարեպաշտի տիրակալության համար մարզպանության հյուսիսային շրջաններում, և այն աստիճանաբար կենտրոնանում ու իրականանալի է դառնում նրա հարավային՝ քաղաքականապես ավելի կայուն ու էթնիկապես միատարր մասում՝ Ուտիք-Արցախում կամ Հայոց Արևելից կողմերում ու պարփակվում վերջինիս շրջանակներում: Այսուհետև նրա գործունեությունը ծավալվում է նրշված կողմերում և ուղղորդվում այս հայաշխարհի քաղաքական- տնտեսական ու հոգևոր- մշակութային կյանքի զարգացմանը⁴³:

Վաչագան Գ-ի իշխանությունը պատմիչն անվանում է «թագավորություն»⁴⁴: Բայց այն թագավորություն էր այնքանով, որքանով դա կարող էր թույլ տալ Սասանյան Իրանը, որն, այնուամենայնիվ, շարունակում էր պահպանել տիրապետությունը տարածաշրջանում և տեղերում ուներ իր նշանակած, ուստի և իրեն հպատակ իշխանները: Բայց պատմիչի համար այն «թագավորություն» էր, քանի որ Վաչագան Բարեպաշտի իշխանության գալով՝ պարսիկ մարզպանների շուրջ երեսնամյա տիրապետության ծանր ու մղձավանջային

⁴² Մանրամասնությունները տե՛ս Սվազյան Հ. Ս., *Աղվանից աշխարհի պատմություն*, էջ 216-221:

⁴³ Որ Վաչագանի իշխանությունն իր վերջին շրջանում նշված քաղաքական հանգամանքների բերումով ծավալվում էր հիմնականում Ուտիք-Արցախում, մենք ցույց ենք տվել նաև նախկինում (տե՛ս Սվազյան Հ. Ս., *Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը* (ՊԲՀ, 1979, N 4, էջ 218):

⁴⁴ Կաղանկատուացի, էջ 47 և հաջ.:

տարիներին հաջորդում է ինքնուրույնության, խաղաղ աշխատանքների ու դրական տեղաշարժերի ժամանակաշրջան: Տարտամ կացության, մոգության ու հասարակական տարբեր խավերի միջև առաջացած հակառակությունների վերացմանը, եկեղեցաշինությանն ու քրիստոնեության ամրապնդմանը, կրթության ու լուսավորության զարգացմանն ուղղված նոր տիրակալի գործունեության շնորհիվ երկրամասը վերածվում է քաղաքական մի միավորի, որն էլ պատմիչին թույլ է տվել այն «թագավորություն» անվանելու, որ, որոշ վերապահումներով, ընդունելի է: Հիմնվելով «Պատմության» հեղինակի այս որակման վրա, Վաչագան Բարեպաշտին էլ վերագրելով «Առանշահիկ» ծագում՝ Բ. Ուլուբաբյանն այդ թագավորությունը համարում է «Առանշահիկների թագավորություն»՝ ստեղծված մարզպանության կազմում: Սակայն այս կարծիքը, մեղմ ասած, չի համապատասխանում պատմական իրականությանը: Ինչպես տեսանք մեր այս քննությունից, Վաչագանը Առանշահիկ չէր, հետևաբար և նորաստեղծ իշխանությունը չէր կարող նրա կարծեցյալ դինաստիայի պատկանելությունն ունենալ և կոչվել այդ անվամբ: Վաչագան Բարեպաշտը Աղվանքում թագավորող հայ Արշակունիներից սերված արքայական հարստությունից էր և իր իշխանությամբ վերականգնեց նրանց թագավորական ավանդույթներն ու կառավարման համակարգը՝ մեծ վերելքի հասցնելով երկրամասի հետմարզպանական շրջանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքը:

Վաչագան Բարեպաշտն ունեցավ թագավորին ոչ վայել վախճան՝ մեռնելով իր երկրի սահմաններից դուրս և կասկածելի հանգամանքներում: Նրա մահը գուժում է ոչ թե այս ողջ պատմության հեղինակը, այլ Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը: «Ապա,- գրում է նա,- մեռան ի Բարկուշատ⁴⁵ թագաւորքն Վաչագան և Աբլ-Ասադ»⁴⁶: Վաչագան Բարեպաշտի մահը տեղի է ունենում 510 թ.: Նա եղավ Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցիչը: «Յետ մահուն նորա սկսաւ նուազել ազգն այն», - գրում է Կաղանկատվացին⁴⁷, հաստատելով, որ նա վերջինն էր նշված հարստության տիրակալներից և միաժամանակ դրանով անուղղակիորեն մեկ անգամ ևս փաստելով նրա ոչ Առանշահիկ ծագումը: Քանզի պարզ տրամաբանությունն էլ հուշում է, որ եթե Վաչագանը Առանշահիկ լիներ, ապա նրա մահից հետո «նուազելու» էր, այսինքն, պատմության ասպարեզից հեռանալու էր «Առանշահիկ» տոհմը: Մինչդեռ հետագա պատմական իրադարձությունները ցույց են տալիս ճիշտ հակա-

⁴⁵ Բարկուշատը նախկին Քաշունիքի Սյունյաց նահանգի 9-րդ գավառի՝ Բաղքի անվանումն էր (տե՛ս Պատմություն նահանգին Միսական, արարեալ **Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, գլուխ Բ, ԲԱ**):

⁴⁶ Նույն տեղում, էջ 86: Վաչագանը թողված է Արցախի Եղիշե Առաքյալ կամ Զրվշտիկ (Ներսիհր) մատուռներից մեկում, որի մասին տեղեկացնում է տապանաքարը՝ «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին...» մակագրությամբ (տե՛ս **Բարխուտարեանց Ս.**, Արցախ, Բագու, 1895, էջ 236, Դիվան հայ վիմագրության, հ. V, կազմեց Բարխուդարյան Ս. Գ., Ե., 1989, էջ 110):

⁴⁷ Կաղանկատուացի, էջ 338:

ռակը: Առանշահիկները պատմության թատերաբեմում հայտնվում են նրանից հետո և վերելք ապրելով՝ նոր ու խոր հետք թողնում երկրամասի պատմության մեջ: Իրավացի է Մ. Բարխուտարյանը, երբ գրում է. «Վաչական Գ-ի մահվամբ վախճանվում է և Աղվանից Արշակունի թագավորությունն: Այնուհետև Աղվանից երկիրն կառավարվում է Առանշահիկ իշխաններով»⁴⁸:

Այսպիսով, Վաչական Գ Բարեպաշտը ծագումով Արշակունի էր, այն Արշակունիներից, որոնք սերվել էին Տրդատ Գ-ի ազգակից Սանատրուկ-Մանեսանից, իշխանության էր եկել քաղաքական հանգամանքների թելադրանքով և սկզբնական շրջանում իշխում էր Աղվանից մարզպանության ընդգրկած ողջ տարածքում, ապա և, վերջինիս տրոհման գործընթացի հետևանքով առաջացած նոր պայմաններում՝ Հայոց Արևելից կողմերում: Նա, Առանշահիկ էլ չլինելով, հանդես է եկել իբրև երկրամասի քաղաքական ինքնուրույնության, տնտեսական ու հոգևոր-մշակութային զարգացման նախանձախնդիր գործիչ:

К ВОПРОСУ О ДИНАСТИЧЕСКОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ АЛУАНКСКИХ ЦАРЕЙ ВАЧЕ II И ВАЧАГАНА III БЛАГОЧЕСТИВОГО

СВАЗЯН Г. С.

Резюме

В IV в., в период формирования феодальных отношений, в Алуанке к власти пришла Аршакидская династия, восходящая к родственнику армянского царя Трдата III – Санатруку-Санесану. Мовсес Каланкатваци упоминает всех представителей Аршакидской династии, правивших в стране. Причем, поместив их в одном списке, историк тем самым указывает на то, что они принадлежат к одной династии – династии Аршакидов. Однако некоторые исследователи, вопреки М. Каланкатваци, Ваче II и Вачагана III Благочестивого объявляют Араншахиками, исключив их из приводимого Мовсесом Каланкатваци списка. Между тем детальный анализ данных М. Каланкатваци в сопоставлении с историческими событиями V в. явствует о неоспоримости принадлежности Ваче II и Вачагана III Благочестивого к династии армянского происхождения – к Аршакидам. Ряд историков придерживается точки зрения, что Вачаган III Благочестивый правил Северо-восточными областями Армении, сужая тем самым границы его правления. В 485 г. Вачаган персидским царем Вагаршем был назначен правителем всего Алуанкского марзпанства, и лишь впоследствии в силу раздробленности марзпанства власть Вачагана III Благочестивого ограничилась пределами правобережья Куры и была направлена на политическое развитие двух армянских областей – Утика и Арцаха.

⁴⁸ Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 90: